«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՓՈՐՁԱԳԵՏԻ (ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐԻ) ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

Առաջադրանքը՝ Ծրագրի «Քաղաքացիական մասնակցության ակումբ» ուսումնական խմբակների խմբակավարների *հետազոտական բազային մեթոդներ, մշտադիտարկման և գնահատման, առաջնորդության/արդյունավետ հաղորդակցության/հանրային խոսքի հմտություններ* զարգացնելու համար դասընթացավարի/ների ներգրավում

Ծառայության տեսակը՝ արտապատվիրում՝ համապատասխան պայմանագրային հիմքով

Դասընթացի ընդհանուր տևողությունը՝ 7,5 ժամ (հինգ 90 րոպե տևողությամբ նիստեր)

Ձևաչափը՝ առկա

Վայրը և ժամկետը՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, սթ. հոկտեմբերի 23-28

Դասընթացի մասնակիցների կազմը և քանակը՝ 10-15 ուսուցիչներ և փոխտնօրեններ ՀՀ Տավուշի մարզի դպրոցներից

1. Ընդհանուր տեղեկատվություն

«ՓԻ ԷՅՉ Ինթերնեշն» կազմակերպության հայկական մասնաճյուղը գործընկեր կազմակերպությունների՝ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հիմնադրամի, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի հետ համատեղ իրականացնում է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ: **Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:**

Ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ-ում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը՝ բարելավելով դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակը և ազդեցության շրջանակը, ինչպես նաև խթանելով հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածությունը:

Ծրագրի շրջանակում սույն թվականի սեպտեմբերի 18-ից ՀՀ Տավուշի մարզի թվով 5 դպրոցներում մեկնարկել է **«Քաղաքացիական մասնակցության ակումբ» ուսումնական խմբակի (այսուհետ՝ Խմբակ) փորձարկումը**: Նախագծային ուսումնառության մեթոդաբանական հիմքի վրա վեցամսյա տևողությամբ խմբակի նպատակն է նպաստել սովորողների քաղաքացիական գիտելիքների ավելացմանը, մասնակցային վարքագծի ձևավորմանը:

2. Արտապատվիրված ծառայության նկարագիրը

«ՓԻ ԷՅՉ Ինթերնեշն» կազմակերպության հայկական մասնաճյուղը (այսուհետ՝ Պատվիրատու) ծառայությունների սույն արտապատվիրման արդյունքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ակնկալում է ստանալ հետաքրքրվածության առաջարկներ, որոնք բավարարում են ստորև նշված կետերին:

Ա. Առաջարկը պետք է միտված լինի զարգացնելու դասընթացի մասնակիցների հետազոտական (քանակական/որակական) բազային հմտությունները, մշտադիտարկման և գնահատման գործընթացներին և գործիքներին տիրապետելու հմտությունները, առաջնորդության և արդյունավետ հաղորդակցման կարողությունները: **Ընդ որում, առաջարկը կարող է ներառել բոլոր վերը թվարկվածները, դրանցից մի քանիսը կամ վերաբերել թվարկվածներից միայն մեկին:** Տարբեր թեմաների շուրջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից առանձին առաջարկներ ընտրելու պարագայում, Պատվիրատուն ընտրված գործընկերների հետ կբանակցի դասընթացի կազմակերպման օրվա, բոլոր պարապմունքների արդյունավետ փոխկապակցման, դրանց մատուցման հերթականության շուրջ:

Բ. Առաջարկը պետք է հիմնված լինի ակտիվ ուսումնառության ժամանակակից մեթոդաբանության վրա:

Գ. Հետաքրքրված անձանց կողմից ներկայացված առաջարկները պետք է պարունակեն.

- Ընդհանուր դասընթացի, համապատասխան նիստերի համառոտ նկարագրությունը, առաջարկվող նյութի՝ խմբակավարի գործունեության հետ կապվածության հիմնավորումը, վերջնարդյունքները և դրանց հասնելու ուղիները:
- Ներկայացնող անձի համապատասխան փորձառությունը վկայող հիմքեր՝ CV, վկայականներ, տեղեկանք:
- Մեկ նիստի հաշվարկով (90 րոպե տևողությամբ) ակնկալվող համախառն վճարի չափը՝ ՀՀ դրամով:

Դ. Առաջարկները պետք է ներկայացնել **մինչև ս.թ. հոկտեմբերի 9-ը**՝ ուղարկելով lilia.khachatryan@ph-int.org էլ.հասցեին, CC դաշտում ներառելով նաև aleksandr.shagafyan@ph-int.org հասցեն: Վերնագրի դաշտում պետք է նշել. ACE Program Civic Clubs – Training Proposal:

3. Պատվիրատուի պատասխանատվություն

Պատվիրատուն կապահովի դասընթացի հետ կապված բոլոր տեխնիկական և կազմակերպչական հարցերը, այդ թվում՝ դասընթացի վայրի ապահովումը, դասընթացի համար անհրաժեշտ նյութերի տպագրությունը և բազմացումը, մասնակիցների, ինչպես նաև դասընթացավարի/ների փոխադրման, սննդի, անհրաժեշտության դեպքում՝ կեցության, կազմակերպումը: